

## ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅ ՍՓՅՈՒՌԸ

### *Մերգեյ Սումյոննի*

Գերմանիայի հայկական համայնքը ներկայացված է աշխարհի ամենատարբեր հիմնականում հետխորհրդային և մերձավորարևելյան երկրներից գաղթած հայերով: Չնայած հայերն այստեղ սակավաթիվ են, այնուամենայնիվ, վերջին տարիներին նրանց հաջողվել է վերածվել բավական հզոր հասարակական-քաղաքական ուժի, որն ընդունակ է ինչպես հավասարը հավասարի հետ մրցակցել օտարերկրացիների ամենամեծաթիվ խմբի՝ Գերմանիայի թուրքերի հետ: Հայերի և դաշնային հանրապետության իշխանությունների փոխհարաբերությունները վերելք են ապրում: Թեև մինչև օրս այդ փոխհարաբերությունների ամենասուր հարցերից մեկը մնում է Գերմանիայի կողմից Հայոց ցեղասպանության չճանաչումը, սակայն այս բարդ հարթությունում ևս Գերմանիայի հայկական համայնքը էական հաջողություններ է ձեռք բերել:

Չնայած Գերմանիան, ի տարբերություն ԱՄՆ-ի, Լատինական Ամերիկայի երկրների կամ Ավստրալիայի, ավանդաբար ներգաղթյալների համար հրապուրիչ երկիր չի հանդիսանում, սակայն հայ գաղթյալներ ընդունելու հարուստ փորձ ունի: Նոր ժամանակներում Գերմանիայում բնակություն հաստատած առաջին հայերը ուսանողներ էին, ովքեր կայսերական Գերմանիա էին եկել ուսանելու և 1885թ. Լայպցիգում հիմնել էին Գերմանիայի տարածքում առաջին Հայ ուսանողների միությունը:

Այսուհանդերձ, Գերմանիա հայերի գաղթի մասին, ըստ էության, կարելի է խոսել 20-րդ դ. համատեքստում. Թուրքիայում հայերի ցեղասպանությունից, ինչպես նաև Առաջին աշխարհամարտից հետո հայերի իսկապես զգալի զանգված հայտնվեց Գերմանիայում: Հարկ է հատկապես ընդգծել, որ միգրացիոն հոսքն անհամեմատ մեծ կարող էր լինել, եթե կայսերական Գերմանիան այդ իրադարձություններում հանդես չգար Թուրքիայի կողմից՝ ակնհայտորեն օժանդակելով թե՛ ցեղասպանության նախապատրաստմանը, թե՛ հետևանքների քողարկմանը: Այնուամենայնիվ, 1914թ. Բեռլինում հիմնվեց «Գերմանա-հայկական ընկերություն» (*Deutsch-Armenische Gesellschaft e.V.*) ոչ առևտրային միավորումը, իսկ 1923թ.՝ առաջին օրինական գրանցումն ունեցող հայկական համայնքը՝ «Հայկական գաղութը Բեռլինում» (*Armenische Kolonie zu Berlin*) անվամբ [1]:

Հայ վերաբնակների առաջին զանգվածային ալիքը դեպի Գերմանիա (նշենք, որ խոսքն այստեղ Արևմտյան Գերմանիայի մասին է) սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, 1940-ական թթ. վերջերին, հիմնականում Մերձավոր Արևելքի տարբեր երկրներից: 1950-1960-ական թթ. հայ վերաբնակների հիմնական զանգվածը կազմում էր Իրանից, Թուրքիայից և Լիբանանից Գերմանիա ուսանելու եկած հայ երիտասարդությունը, որն այստեղ մշտական բնակություն հաստատեց: Հենց այս ներգաղթյալներն էլ երկար ժամանակ կազմեցին Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում հայկական սփյուռքի կորիզը:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում հայերի ամենազանգվածային տեղաշարժը դեպի ԳՂՀ տեղի ունեցավ 1970-ական թթ., ինչը խթանվեց թե՛ լիբանանյան պատերազմով և թե՛ Իրանի ֆունդամենտալիստական հեղափոխությամբ: 1980-ական թթ., իրանա-իրաքյան պատերազմի արդյունքում, հայերի հոսքն Իրանից շարունակվեց: Տեղաշարժերի այս ալիքի շրջանակներում ԳՂՀ-ում բնակություն հաստատեցին 20 հազար հայեր:

Դեպի Գերմանիա հայերի գաղթի վերջին հզոր ազդակը հանդիսացավ Խորհրդային Միության փլուզումը և, հատկապես, Բաքվի, Սումգայիթի և Լեռնային Ղարաբաղի իրադարձությունները: Վերջին հանգամանքն արժե հատկապես ընդգծել, քանի որ 1990-ական թթ. Գերմանիա գաղթողների հիմնական մասը հայեր էին ոչ այնքան Հայաստանից, որքան նախկին ԽՍՀՄ այլ հանրապետություններից, առաջին հերթին՝ Ադրբեջանից: Գերմանիայում Հայերի կենտրոնական խորհրդի (*Zentralrat der Armenier in Deutschland, ZAD, be6-caïr <http://www.d-armenier.de>*) տվյալներով՝ նախկին ԽՍՀՄ երկրներից Գերմանիայում ընդհանուր առմամբ բնակություն են հաստատել մոտ 15 հազար մարդ, որոնցից 10 հազարը փախել էին Ադրբեջանից:

Նախկին ԽՍՀՄ երկրներից 1990-ական թթ. սկզբին հայերի զանգվածային արտագաղթը Գերմանիա թվով վերջինն էր: Արդյունքում՝ Գերմանիայի Հայերի կենտրոնական խորհրդի տվյալներով, այսօր երկրի տարածքում ապրում է 40-42 հազար հայ, որի երկու երրորդը գերմանական քաղաքացիություն ունի (նրանց գրեթե կեսն արդեն ծնվել է ԳՂՀ տարածքում): Գերմանիայում ապրող էթնիկ հայերի ճշգրիտ թվի բացակայությունը կապված է այն բանի հետ, որ նրանց զգալի մասն ունի երրորդ երկրների՝ Իրանի, Ադրբեջանի, Ուզբեկստանի, Լիբանանի, Թուրքիայի և այլ երկրների անձնագրեր: Ուստի, Գերմանիայի ՆԳՆ պաշտոնական վիճակագրության մեջ, որտեղ ազգային պատկանելությունը հավասարեցված է քաղաքացիությանը, նրանք ներկայացվում են իբրև իրանցիներ, ադրբեջանցիներ, ուզբեկներ, լիբանանցիներ կամ թուրքեր: Այս հանգամանքից ելնելով՝ տվյալները, որ ունի Գերմանիայում Հայերի կենտրոնական խորհուրդը, մոտա-

վոր են և հիմնված են խորհրդին էթնիկ հայերի դիմումների թվի, ինչպես նաև մերձավորարևելյան և ԱՊՀ երկրներից գաղթողների հոսքերի վերլուծությունների վրա:

Գերմանիայում հայերը հիմնականում հաստատվել են տնտեսապես զարգացած Հյուսիսային Հռենոս-Վեստֆալիա դաշնային հողում՝ Քյոլն և Դյուսելդորֆ քաղաքների միջակայքում: Գերմանիայում հայկական սփյուռքի կենտրոններ են նաև Հեսենի դաշնային հողը (այստեղ հայերի մեծ մասն ապրում է Մայնի Ֆրանկֆուրտում) և Համբուրգը: Բավական հզոր են Բեռլինի (մոտ 2000 մարդ) և Մյունխենի հայ համայնքները [2]: Դրանք նաև ներգաղթյալներին բավական բնորոշ բնակավայրեր են:

Գերմանիայի հայ համայնքի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ նրա անդամներն այստեղ են եկել ամենատարբեր երկրներից, ուստիև ունեն միանգամայն տարբեր մշակութային հատկանիշներ: Գերմանիայի հայ համայնքի մոտավոր վերլուծությունն (որ կատարել են գերմանացի սոցիոլոգները) ըստ բնակության նախնական վայրերի, առանձնացնում է Գերմանիայի հայերի երեք հիմնական խումբ. այսպես կոչված «արևմտյան հայեր» (*Westarmenier*), որոնք եկել են Թուրքիայից, «արևելյան հայեր» (*Ostarmenier*), որոնք Գերմանիա են եկել Իրանից, ինչպես նաև հենց Հայաստանից եկած հայեր: Ինչպես արդեն վերը նշվել է, Գերմանիայի հայերի կազմում մեծ է նաև Լիբանանից, Իրաքից և Մերձավոր Արևելքի այլ երկրներից եկածների թիվը, որոնք կազմում են առանձին՝ «արաբական» խումբը: Հատուկ պետք է նշել հայերի այն խմբի մասին (ըստ տարբեր գնահատականների՝ մոտ 15 հազար մարդ), ովքեր Գերմանիա են եկել ոչ թե Հայաստանից, այլ նախկին ԽՍՀՄ այլ երկրներից (հիմնականում Ադրբեյջանից): Այս խմբի հայերի մեծ մասի հաղորդակցման լեզուն ռուսերենն է, ինչն էլ նրանց առանձնացնում է Գերմանիայի հայերի ընդհանուր մասից: Հայերի կենտրոնական խորհրդի ներկայացուցիչների կարծիքով՝ հենց նախկին ԽՍՀՄ երկրների հայերն են, որ ակտիվությամբ չեն մասնակցում հայկական սփյուռքի գործունեությանը՝ նախընտրելով անդամակցել ոչ թե էթնիկական և մշակութային սկզբունքներով հիմնվող կազմակերպություններին, այլ արհեստակցական միություններին (հաճախ՝ գերմանական):

Գերմանիայում բնակություն հաստատած հայերի տարբեր մշակութային ավանդույթներ ունենալով է հենց բացատրվում այն փաստը, որ հայկական կազմակերպությունների ներկայացուցիչները նախընտրում են խոսել Գերմանիայի հայերի «երկաստիճան ինտեգրման» մասին: Գերմանական հասարակությանը գաղթյալների ինտեգրման հետ մեկտեղ (այն դեպքում, երբ հասուն տարիքում Գերմանիա գաղթածների ավագ սերնդի՝ գերմաներեն սովորելու խնդիրն աստիճանաբար երկրորդ պլան է մղվում. դա, առա-

ջին հերթին, կապված է այն բանի հետ, որ գաղթի վերջին զանգվածային ալիքը տեղի ունեցավ 15 տարի առաջ), հայերի մշակութային միությունները հարկադրված են մեկ միասնական համայնքում ինտեգրել հայերի բավական տարաբնույթ խմբերի, ինչը միշտ չէ, որ դուրին լուծելի խնդիր է:

Գերմանիայի հայերի կենտրոնական խորհուրդն իր խնդիրն է համարում աջակցությունը Գերմանիայի հայերի ազգային ինքնության երեք հիմնական՝ մշակութային, լեզվական և կրոնական բաղադրատարրերի պահպանման ոլորտում: Ընդ որում՝ հատուկ շեշտ է դրվում երեխաների և երիտասարդության հետ աշխատանքի վրա (առաջին հերթին՝ շաբաթօրյա դպրոցներում, որոնցում ուսուցվում են լեզուն և մշակույթը): Երեխաներն ու երիտասարդները համայնքի այն անդամներն են, որոնք ծնվել և մեծացել են Գերմանիայում՝ օտար մշակութային և լեզվական միջավայրում:

Նման ինտեգրացիոն նախագծերի հիմնական խնդիրն այն է, որ գերմանական իշխանություններն ընդհանրապես ֆինանսական աջակցություն չեն ցուցաբերում հայկական ազգային կազմակերպությունների մշակութային-կրթական ծրագրերին: Այսպես, եթե Գերմանիայի Հրեաների կենտրոնական միությունը, իր մշակութային-կրթական ծրագրերի համար, ԳԴՀ դաշնային կառավարությունից 2005թ. ստացել է ֆինանսական աջակցություն՝ €3 մլն չափով, ապա համանման հայկական կազմակերպություններն ընդհանրապես որևէ օգնություն չեն ստացել: Արդյունքում՝ Գերմանիայի հայկական համայնքը, որն այնքան էլ մեծաթիվ չէ, ինչպես, օրինակ, ԱՄՆ-ում, ապրում է «ինքն իրենով» և հաճախ նույնիսկ երեխաների համար լեզվական և մշակութային դպրոցներ կազմակերպելու միջոցներ չի գտնում: Եվ հայկական մշակութային կազմակերպությունների աշխատակիցներն էլ աշխատում են անվճար: Մյուս կողմից՝ հենց այն պատճառով, որ Գերմանիայի հայերն ապրում են տնտեսապես զարգացած երկրում, նրանք չեն կարող հույսները դնել ամերիկյան այն բարեգործական հայկական կազմակերպությունների օգնության վրա, որոնք անհամեմատ ավելի մեծ հետաքրքրվածությամբ աշխատում են Հայաստանի օգնության (ինչը միանգամայն բացատրելի է), քան Գերմանիայի հայերի աջակցության ծրագրերի հետ: Արդյունքում, Գերմանիայի Հայերի կենտրոնական խորհրդի նախագահ, դոկտոր Շավարշ Հովասափյանի խոսքերով, ճակատագրի հեգնանքով Գերմանիայում ապրող հայերին ցուցաբերվող ամենաէական օգնությունը Հայաստանի կառավարության՝ հայերենը հայրենիքում ուսանել ցանկացող ուսանողներին աջակցելու ծրագիրն է: Հայերեն սովորել կամեցող ուսանողներն ու դասավանդողները հայրենիքում կարող են անցնել հայոց լեզվի չորսշաբաթյա դասընթացներ:

Եվ այնուամենայնիվ, դոկտոր Հովասափյանի խոսքերով, այս դժվար

րությունները չեն նպաստում այն բանին, որ Գերմանիայի հայերը վերադառնան պատմական հայրենիք: Գլխավոր պատճառն, ըստ նրա, այն է, որ երկաթե վարագույրի վերացումից հետո Գերմանիայի հայերը հայրենիքից կտրված չեն համարում իրենց. այսօր յուրաքանչյուր ցանկացող կարող է մեկնել Հայաստան: Գերմանիայի հայերն իրենց տնտեսական հեռանկարները կապում են հենց Գերմանիայի հետ՝ չնայած այն դժվարություններին, որոնք այսօր առկա են երկրի տնտեսությունում: «Հայաստանում ապրում են 3 մլն հայեր,- ասում է դոկտոր Հովասափյանը,- իսկ նրա սահմաններից դուրս՝ կրկնակի ավելի: Հայրենիքից կտրված ապրելը, կարելի է ասել, մեր ճակատագիրն է: Բացի այդ, Հայաստանը շատ փոքր երկիր է, նրա տարածքը հավասար է նույն Հեսենի տարածքին: Եթե բոլոր հայերը որոշեն վերադառնալ հայրենիք, նրանց բոլորի համար որտե՞ղ տեղ կգտնվի»:

Գերմանիայում հայերի մշակութային միավորման խիստ կարևոր գործոն է Հայ Առաքելական եկեղեցին, որի գերմանական թեմը հիմնադրվել է 1990թ.: Կենտրոնը Քյոլնում է: Բայց եկեղեցական ինստիտուտների լիակատար գործունեության համար չի բավարարում երկու շատ կարևոր բան. նախ՝ Գերմանիայում չկան Հայ Առաքելական եկեղեցու բավականաչափ թվով քահանաներ՝ բոլոր հավատացյալներին սպասավորելու համար, երկրորդ՝ լուրջ խնդիրներ կան նույնիսկ խոշոր քաղաքներում եկեղեցական շինություններ կառուցելու գործում, որոնցում հավատացյալների թվաքանակը թույլ կտար կանոնավոր ժամերգություններ կատարել: Այնուամենայնիվ, հենց եկեղեցական թեմն էր, որ 1990-ական թթ. հանդես եկավ որպես մի կազմակերպչական կառույց, որի հիմքի վրա ստեղծվեց Գերմանիայի Հայերի համագերմանական կենտրոնական խորհուրդը: Այսօր այն համակարգում է տեղի հայ ազգային միությունների գործունեությունը:

Հայկական համայնքի և Գերմանիայի իշխանությունների հարաբերությունները մթազնոդ գլխավոր խնդիրը Հայոց ցեղասպանության ճանաչման հարցն է: Պաշտոնական Բեռլինը մինչև օրս չի դատապարտել թուրքերի կողմից իրականացված հայերի ցեղասպանությունը և չի ճանաչել այդ վարագույրություններն իբրև ցեղասպանություն: Մինչև օրս Գերմանիայի կառավարության պաշտոնական փաստաթղթերում Հայոց ցեղասպանությունն անվանվում է միայն «շրջանցող» այնպիսի ձևակերպումներով, ինչպիսիք են «զանգվածային սպանությունները» և «հետապնդումները», ինչն առաջացնում է գերմանացի իրավագետների անկեղծ տարակուսանքը: Օրինակ՝ Համբուրգի համալսարանի պրոֆեսոր Օտտո Լուխթերհանդը (*Otto Luchterhandt*) իր «Հայոց ցեղասպանության սահմանումը «պատմաբանների վեճ» չէ, այլ իրավաբանի խնդիրը» զեկուցագրում, որը պատրաստել է գերմանական Բունդեստագի աշխատանքային խմբի համար, նշում է, որ մի կողմից՝ գեր-

մանացիների առանձնահատուկ վերաբերմունքը ըստ ազգային հատկանիշի զանգվածային սպանությունների հարցերի նկատմամբ պայմանավորված է Գերմանիայի պատմությամբ [3]: Հենց դրա համար Գերմանիան հատուկ ուշադրություն է դարձնում ոչ միայն Հոլոքոստի վերաբերյալ հարցերին, այլև, օրինակ, Նամիբիայում հերերո ազգության ցեղասպանությանը գերմանացի գաղութարարների կողմից (1904թ.), ինչպես նաև Կոնգոյում և Սուդանում վերջերս կատարված ցեղասպանություններին:

Բացի այդ, Գերմանիան է միջազգային քրեական դատարանի ստեղծման գլխավոր նախաձեռնողներից մեկը, որի առաջարկությամբ ցեղասպանությունը համարվում է գոյություն ունեցող հանցագործություններից ծանրագույնը (հոդված 5): Այդուհանդերձ, Հայոց ցեղասպանության հարցի վերաբերյալ Գերմանիան մինչև այսօր խիստ զուսպ դիրքորոշում ունի. «Ցեղասպանության երևույթին (Գերմանիայի) բարոյաքաղաքական զգայական վերաբերմունքի բազմաթիվ վկայությունների ֆոնին էլ ավելի տարօրինակ ու զարմանալի է թվում այն փաստը, թե որքան դժվար է Գերմանիայի համար քաղաքական ուժ գտնել՝ ընդունելու Օսմանյան կայսրությունում ցեղասպանության փաստը: Հակառակ այն ամենի, ինչ կարելի է սպասել, գոհ ժողովրդի հետ ամուր, ոչ երկիմաստ համերաշխության փոխարեն առկա են պաշտոնական հայտարարություններ, որոնք մեծ մասամբ զգուշավոր-խուսանավոր ելույթներ են: Դրանք, անկասկած, արվում են ինչպես թուրքական պետության ու թուրք հասարակության զգայականությանն առնչվող շրջահայացությամբ, այնպես էլ Գերմանիայում ապրող Թուրքիայի քաղաքացիների և Գերմանիայի թուրքական ծագմամբ քաղաքացիների հեշտ խոցելի զգացմունքների նկատմամբ խիստ հազվադեպ հանդիպող երկչոտ զգուշավորությամբ: Կարծես թե երիտթուրքերի վարչակարգի իրականացրած ցեղասպանության փաստի ճանաչումից կարող են տուժել նրանց ազգային հպարտությունը և, իբրև հետևանք, գերմանական հասարակությանն ինտեգրվելու նրանց պատրաստականությունը: Անշուշտ, Գերմանիայի դիրքորոշումն առաջին հերթին որոշում են արտաքին քաղաքական, արտաքին տնտեսական, ինչպես և ներքաղաքական, հատկապես նախընտրական շահերը: Գերմանիայի անհասկանալի, թուլական և օպորտունիստական կեցվածքը հայերի ցեղասպանության հարցում ճնշող է և ամոթալի: Այն պատիվ չի բերում մեր երկրին» [3, ս. 3]:

Հայոց ցեղասպանության նկատմամբ Գերմանիայի դիրքորոշումը գնահատելիս հարկ է տարբերել հիմնախնդրի երկու մակարդակ. «ներքին» մակարդակ, այսինքն՝ ցեղասպանության պաշտոնական ճանաչում կամ չճանաչում պատմության դասագրքերում, հիշարժան օրերի նշում և այլն, և «արտաքին» մակարդակ, այսինքն՝ Գերմանիայի մասնակցությունը հայերի

ցեղասպանության միջազգային հետազոտություններին (ինչն առավել կարևորվում է նրանով, որ երկրի տարածքում են գտնվում այն արխիվները, որոնք վկայում են Օսմանյան կայսրությանը կայսերական Գերմանիայի աջակցության մասին), Թուրքիայի հետ հարաբերություններում ցեղասպանության թեմայի տեղի որոշումը, ինչը հատկապես կարևոր է Եվրամիությունում Թուրքիայի հնարավոր ընդգրկման համատեքստում և այլն:

Ներքին մակարդակում, Գերմանիայի քաղաքական ընտրանիում երկար ժամանակ իշխում էր այն կարծիքը (որը, ըստ պրոֆեսոր Լուիսթերհանդի դիպուկ բնորոշման, պայմանավորված է կուսակցությունների *ներքաղաքական և, հատկապես, նախընտրական շահերով*), թե Հայոց ցեղասպանության ընդունումը միանգամայն ավելորդ է Գերմանիայի համար և կվերածվի մի կողմից՝ թուրքական սփյուռքի ինտեգրացիոն հիմնախնդիրների, իսկ մյուս կողմից՝ Բունդեստագի առաջիկա ընտրությունների ժամանակ նաև հիմնախնդիրներ կառաջացնի այն կուսակցության համար, որը կնախաձեռնի այդ գործընթացը (թուրքական համայնքն ամենամեծն է երկրում՝ մոտ 7-8 մլն մարդ, որոնցից մոտ 6 մլն-ն Գերմանիայի քաղաքացիներ են, այսինքն՝ ձայնի իրավունք ունեն): Այս պատճառով էլ ինչպես Գերմանիայի Հայերի կենտրոնական խորհրդի, այնպես էլ այլ հասարակական կազմակերպությունների (օրինակ՝ Ցեղասպանության հակառակորդների միության, *Verein Völkermordgegner e. V.*, կամ այս պարագայում իբրև հայերի դաշնակից հանդես եկող քրդական կազմակերպությունների) բազմաթիվ պաշտոնական հարցումները մշտապես ստանում էին Բունդեստագի աշխատանքային հանձնաժողովների բացասական պատասխանները: Այսպես, 2001թ. ապրիլի 5-ին գերմանական Բունդեստագը, ի պատասխան այն հանրագրի, որի տակ կար ավելի քան տասնվեց հազար ստորագրություն և որով պահանջվում էր ճանաչել հայերի ցեղասպանությունը և այն որակել որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն, ընդունեց հայտարարություն, որում, մասնավորապես, ասվում էր. *«Հանրագրերի դիտարկման հանձնաժողովը ողջունում է այն բոլոր նախաձեռնությունները, որոնք ծառայում են նման պատմական դեպքերի քննարկմանը: Ընդ որում, սակայն, անհրաժեշտ է ջանալ, որպեսզի նման հետազոտությունները չբորբոքեն հին վերքերը, այլ նպաստեն դրանց ապաքինմանը: Այս հիմնավորվածությամբ՝ այն նախաձեռնությունները, որոնցով հանդես է գալիս հանրագիրը, անհնար է ընդունելի համարել, մանավանդ այն պատճառով, որ անցյալի ժառանգությունը հաղթահարելու խնդիրները դրված են առաջին հերթին այդ դեպքերից տուժած երկրների՝ Հայաստանի և Թուրքիայի վրա»* [4]:

Նման ճապաղ և անտարբեր հայտարարությամբ գերմանական իշխանությունները փաստորեն մի կողմ քաշվեցին Հայոց ցեղասպանության

հարցում որևէ որոշում կայացնելուց՝ իրենց ներքին քաղաքականության ոլորտից այն բացառելով և տեղափոխելով արտաքին քաղաքականության մակարդակ: Միաժամանակ, հարցը բացառապես Հայաստան-Թուրքիա երկկողմ փոխհարաբերությունների գործ հայտարարվեց:

Արտաքին քաղաքականության մակարդակում Գերմանիայի դիրք-որոշումը ցեղասպանության հարցի վերաբերյալ երկար տարիներ հանգում էր զարմանալի համադրության մի կողմից՝ այն վստահության, որ Թուրքիայի կողմից ցեղասպանության ճանաչումը կամ չճանաչումը Հայաստանի և Թուրքիայի երկկողմ փոխհարաբերությունների գործն է (հենց դրա համար էլ Գերմանիան պաշտպանում էր պատմական իրավիճակի հետագոտման հայ-թուրքական երկկողմանի հանձնաժողով ստեղծելու թուրքական առաջարկությունը, *«կարծես թե Գերմանիայի տարածքում գտնվող արխիվային տվյալները բավական չեն, որպեսզի արվի այն եզրակացությունը, որ դա հենց ցեղասպանություն էր և ոչ թե որևէ այլ բան»*), մյուս կողմից՝ ոչ պաշտոնական, բայց հստակ դրսևորված հույսերի, որ Եվրամիությունն մտնելուց առաջ Թուրքիան, այնուամենայնիվ, կընդունի ցեղասպանության փաստը [3, Տ. 2]: Եվ կվերացնի այն քրեական օրենքները, որոնցով հետապնդվում են այն գիտնականներն ու լրագրողները, ովքեր զբաղվում են այս թեմայի օբյեկտիվ հետազոտմամբ:

Այնուամենայնիվ, դեռևս 2005թ., ԳՄԴԿ-ի և «կանաչների» կոալիցիոն կառավարման ժամանակ, գերմանացի քաղաքական գործիչները, որ Թուրքիայի՝ Եվրամիությունն մտնելու գլխավոր ջատագովներն էին, զարմանքով հասկացան, որ եթե Թուրքիայի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցի հանդեպ մեղմվի էլ, ապա միայն խոսքերով: Թուրքիայի չափազանց ինքնավստահ քաղաքականությունն էլ (որ Գերմանիային դնում է անհարմար կացության մեջ) հանգեցրեց այն բանին, որ 2005թ. հունիսի 16-ին գերմանական Բունդեստագը քննարկեց հայերի ցեղասպանության բանաձևի նախագիծը: Այն 2005թ. փետրվարի 22-ին առաջարկվել էր այն ժամանակ դեռևս ընդդիմադիր ԲԴՄ/ԲՍՄ խմբակցության կողմից: Բունդեստագն ընդունեց 1915թ. իրադարձությունները և դրանցում Թուրքիայի դերը դատապարտող բանաձև: Բանաձևում ընդունվում էր նաև կայսերական Գերմանիայի մեղքը 1,5 մլն հայերի մահվան մեջ:

Չնայած բանաձևի տեքստում հայերի կոտորածն ուղղակիորեն ցեղասպանություն չի անվանվում (այդ տերմինը 1915թ. դեպքերի վերաբերյալ մինչև օրս թաքուցված է գերմանական պաշտոնատար անձանց համար), «ցեղասպանություն» բառն, այնուամենայնիվ, բանաձևի տեքստում կիրառվել է որպես ուրիշի խոսք. *«Բռնի տեղահանությունների և զանգվածային սպանությունների զոհ դարձան, ըստ անկախ գնահատականների, ավելի*



քան 1 մլն հայեր: Բազմաթիվ անկախ պատմաբաններ, խորհրդարանների և միջազգային կազմակերպությունների անդամներ հայերի աքսորը և ոչնչացումը անվանում են ցեղասպանություն», - ասվում է բանաձևում [5]: Արդեն միայն այս փաստը նշանակալի քայլ է գերմանական իշխանությունների կողմից հայերի ցեղասպանությունը ճանաչելու ճանապարհին, ինչի մասին նշվեց Գերմանիայի Հայերի կենտրոնական խորհրդի 2005թ. օգոստոսի 8-ի պաշտոնական հայտարարության մեջ: Հայտարարությունը ողջունում էր Բունդեստագի բանաձևը, այն կոչ էր անում կանգ չառնել ցեղասպանության ընդունման կես ճանապարհին [6]: 2005թ. աշնանը, խորհրդարանական ընտրություններից հետո, որոնք իշխանության բերեցին Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության հարցում փոքր-ինչ ավելի զուսպ տրամադրված քրիստոնեա-դեմոկրատներին, հայերի ցեղասպանության հարցում Գերմանիայի դիրքորոշումն էլ ավելի կոշտ դարձավ: Մասնավորապես, ցեղասպանության ճանաչումը հայտարարվեց Թուրքիայի՝ ԵՄ մտնելու պարտադիր պայմաններից մեկը:

Այսուհանդերձ, հայկական համայնքի համար դեռևս իրողություն չեն դարձել այնպիսի կարևոր փաստեր, ինչպիսին է, օրինակ, դասագրքերում ցեղասպանության մասին տեղեկատվության գետեղումը: «Նման խնդրանքներով մենք դիմել ենք մի շարք դաշնային հողերի կրթության նախարարություններին», - պատմում է Գերմանիայի Հայերի կենտրոնական խորհրդի նախագահ, դոկտոր Հովասափյանը, - բայց դրանք բոլորն անպատասխան են մնացել: Միակ դաշնային հողը, որտեղ ցեղասպանության մասին հիշատակությունն ընդգրկվել էր դպրոցական ծրագրերում (Գերմանիայում կրթության հարցերը գտնվում են ոչ թե դաշնության, այլ առանձին դաշնային հողերի վարույթում) արևելագերմանական Բրանդենբուրգն էր: Այստեղ ցեղասպանությունը մեկ նախադասությամբ հիշատակվում էր դպրոցական դասագրքում՝ «Պատերազմները և դրանց հետևանքները» թեմայում: Հիշատակումը դասագիրք է մտցվել 2002թ., սակայն 2005թ. սկզբին, Թուրքիայի դեսպանության բողոքից հետո, հանվել է ուսումնական ձեռնարկից:

Հայերի ցեղասպանության մասին պատմության դասագրքերում հիշատակումներ չգետեղելու գլխավոր պատճառներից մեկը, բացի թուրքական գործող լոբբիից, ըստ շատ փորձագետների՝ նաև այն է, որ գերմանացի պաշտոնատարները չեն ցանկանում պատմության դասընթացներում ուրիշ որևէ այլ ցեղասպանություն հիշվի՝ Հոլոքոստից բացի: Չնայած այն բանին, որ հայերի ցեղասպանության մասին տեղեկատվությունն ընդգրկված է Իսրայելի պատմության հանրակրթական դասագրքերում, և, օրինակ, Խաղաղության Նոբելյան մրցանակակիր Էլի Վիգելը ցեղասպանությունն անվանել է «Հոլոքոստ, որ տեղի է ունեցել Հոլոքոստից առաջ», գերմանական

իշխանությունները նախընտրում են ապահովել իրենց: «Իշխանությունները իսիստ անհաճո որոշում են կայացրել,- տարակուսում է դոկտոր Հովասափյանը,- եթե ցեղասպանության մասին տեղեկատվությունը մտցվեր դպրոցական ծրագրերում, Հոլոքոստի հիշատակը դրանից բոլորովին չէր տուժի: Մենք որևէ չափով չենք էլ հավակնում, որ ցեղասպանությունը ավելին հայտարարվի, քան Հոլոքոստն է: Դա պետք է չէ: Սակայն իշխանությունները բաց թողեցին դպրոցականներին, որոնցից շատերը թուրքական ծագում ունեն, իրականում տեղի ունեցածի մասին պատմելու հիանալի հնարավորությունը: Հետո, երբ իշխանությունները զարմանում են, թե որտեղից Գերմանիայում այդքան շատ մարդիկ, որ ժխտում են ցեղասպանության փաստը, հարկ է, որ մտածեն դպրոցում ցեղասպանության՝ որպես 20-րդ դարասկզբին ըստ ազգային հատկանիշի իրականացված զանգվածային սպանություններից մեկի պատմության դասավանդումը մերժելու մասին»:

Ցեղասպանության թեման առանձնահատուկ շիկացման հասավ 2006թ. գարնանը, երբ Բեռլինում, «Թալեաթ փաշա» գործողության<sup>1</sup> շրջանակներում, թուրք ազգայնականները պատրաստվում էին ցույց անցկացնել՝ բողոքելով Գերմանիայի կողմից հայերի ցեղասպանությունը ճանաչելու դեմ: Հայկական և քրդական հասարակական կազմակերպությունների բազմաթիվ բողոքները, որոնցով պահանջվում էր արգելել ցեղասպանության փաստը ժխտող թուրք ազգայնականների քայլարշավները, հաջողություն չունեցան: Գործը քննող Բեռլինի դատարանը որոշեց թույլատրել քայլարշավը՝ կազմակերպիչներին պարտավորեցնելով չտանել ցեղասպանությունը ժխտող տեքստերով պաստառներ: Ցույցը կայացավ 2006թ. մարտի 18-ին, մասնակիցների թիվը 1700-2000 մարդ էր (մինչ այդ կազմակերպիչները հայտարարում էին մինչև 5 մլն մարդ հավաքելու մասին, ինչն ակնհայտորեն չափազանցում էր նրանց հնարավորությունները): Չնայած դատարանի ուղղակի արգելքին, մասնակիցները տանում էին «Մենք ցեղասպանություն չենք գործել, այլ պաշտպանել ենք հայրենիքը» կարգախոսներով պաստառներ: Ցույցի ժամանակ բավական շատ էին նաև «Կորչի ամերիկյան իմպերիալիզմը», «Ամեն ինչ հայրենիքի համար» և «Կեցցե թուրքգերմանական բարեկամությունը» կարգախոսները [7]: Ցույցի կազմակերպիչները Բեռլինի իշխանություններից պաշտոնական բողոք ստացան, սակայն այլ պատժամիջոցներ նրանց դեմ չկիրառվեցին:

Գերմանիայի իշխանությունների կողմից ցեղասպանության ճանաչ-

<sup>1</sup> Քարոզչական միջոցառումների համախումբ, որ կազմակերպել էր թուրքական ձախ-ազգայնական *İscı Partisi* կուսակցությունը՝ Գերմանիայի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելու գործընթացի դեմ սկսված քարոզարշավի շրջանակներում:

ման շուրջ բանավեճերի համատեքստում անհրաժեշտ է մեկ անգամ ևս ընդգծել այն փաստը, որ Գերմանիայի հայերի հիմնական դաշնակիցներից մեկն այս պայքարում Գերմանիայի քրդերն են, որոնք նույնպես ջանում են գերմանական կառավարության ուշադրության առարկան դարձնել ճնշումները Թուրքիայի կողմից: Հայերից հետո քրդերն են, որ առավել հետևողական են ցեղասպանության ճանաչման հարցում, և հենց քրդական կազմակերպություններն են, որ օգնում են հայ գործընկերներին բողոքի գործողություններ կազմակերպել՝ ուղղված Թուրքիայի կողմից ցեղասպանությունը ժխտելու դեմ: Իրենց հերթին՝ հայկական կազմակերպություններն աջակցում են Գերմանիայի քրդերի քաղաքական ելույթներին:

Ընդհանուր առմամբ, այսօր կարելի է խոսել այն մասին, որ հայկական համայնքը Գերմանիայում բավական կայուն է: Գերմանիայի հայերը լուրջ հաջողության են հասել մի միասնական կազմակերպչական կառույց ստեղծելու մեջ, որը համակարգում և միավորում է տեղի հայ համայնքների ջանքերը: Տեսանելի ապագայում Մերձավոր Արևելքում լայնածավալ ռազմաքաղաքական աղետների բացակայության դեպքում հայերի նոր հոսք Գերմանիայում նույնպես չի սպասվում: Հետևաբար՝ հայկական սփյուռքը Գերմանիայում կպահպանի կայունությունը և կկարողանա հետագայում ևս կենտրոնացնել ջանքերը գերմանական հասարակության հետ փոխհարաբերությունների վրա: Ներկա պահին հայկական համայնքի դիրքերը գերմանական պետության ներսում ամրապնդվում են: Հասկանալի է, որ հայ համայնքի ազդեցությունն անհնար է համեմատել թուրքական համայնքի ունեցած ազդեցության հետ, սակայն հայերի համար այնպիսի առանցքային հարցերում, ինչպիսին, օրինակ, Գերմանիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցն է, կողմերի ուժերը գրեթե հավասարվել են: Առանձնապես հարկ է ընդգծել, որ ստեղծված իրավիճակում Գերմանիայի հայերը հմտորեն օգտագործում են միջազգային իրադրությունը, որն օբյեկտիվորեն թուլացնում է Թուրքիայի դիրքերը որպես մի երկրի, որը խիստ շահագրգռված է Եվրամիությանն անդամակցությամբ և, հետևաբար, պատրաստ է զիջումների: Այսպիսով, կարելի է համարձակորեն ասել, որ Գերմանիայի հայկական համայնքը վերելք է ապրում, որը, հանգամանքների հաջող դասավորվածության պարագայում, կարող է երկարատև և անամպ լինել:

*Օգոստոս, 2006թ.*

### Աղբյուրներ և գրականություն

1. *Tauber A.*, Armenier in Hamburg. Ethnographie einer Gemeinde in der Diaspora. – [http://www1.uni-hamburg.de/Ethnologie-Kaukasus/html/texte/k\\_at.html](http://www1.uni-hamburg.de/Ethnologie-Kaukasus/html/texte/k_at.html)
2. *Hofmann T.*, Armenier und Berlin – Berlin und Armenien. – Berlin, 2005. S. 4.
3. *Luchterhandt O.*, Die Feststellung des Völkermords an den Armeniern – kein „Historikerstreit“, sondern Sache und Aufgabe des Juristen. – см. <http://www.d-armenier.de/cms/html/modules/Downloads/download/V%F6lkerermord.HistorikerLuchterhandt.pdf>
4. [http://aga-online.org/downloads/de/document/aga\\_07.pdf](http://aga-online.org/downloads/de/document/aga_07.pdf)
5. <http://aga-online.org/downloads/de/document/BundestagResolution.pdf> текст резолюции на армянском: [http://aga-online.org/downloads/de/document/BundestagResolution\\_am.pdf](http://aga-online.org/downloads/de/document/BundestagResolution_am.pdf)
6. <http://www.d-armenier.de/cms/html/index.php?module=pagesetter&func=printpub&tid=4&pid=12>
7. *Ruhige Demos von Türken und der NPD. Weniger Nationalisten als von der Polizei erwartet.* – Tagesspiegel, 19.3.2006; *Demonstrieren ohne Leugnen.* – taz Berlin lokal, 18.3.2006; *Akyol C.* – Pleite für Demo zu Armenier-Völkermord. Vor einem Protestmarsch gegen die Verurteilung des Völkermords an Armeniern seilen sich immer mehr Türken ab. – taz, 18.3.2006.

## АРМЯНСКАЯ ДИАСПОРА ГЕРМАНИИ

*Сергей Сумленный*

### Резюме

На протяжении XX в. миграция армян в Германию была обусловлена политическими и военными катаклизмами: Геноцидом армян в Турции, Второй мировой войной, гражданской войной в Ливане, Исламской революцией в Иране, а также распадом Советского Союза. Современную армянскую общину страны можно разделить на четыре основные группы: выходцы из Турции, выходцы из Ирана, выходцы из Армении и выходцы из других стран бывшего СССР, вследствие чего армянская диаспора в Германии, насчитывающая около 40 тысяч человек, представляет собой весьма разнородное образование, сближение между представителями которого является порой сложной задачей.

Основные трудности, которые испытывает армянская община в Герма-

нии, финансового плана: немецкое государство не оказывает армянам никакой поддержки в преподавании родного языка и культуры, и вся деятельность в этом направлении осуществляется на общественных началах. Попытки армян добиться выделения государственных субсидий по образцу поддержки еврейских культурных проектов пока безуспешны.

Главной проблемой политического плана, омрачающей отношения армян и немецких властей, является упорное нежелание последних признавать факт Геноцида армян в Османской империи. Курс немецкого правительства на задабривание проживающих в стране турок, а также нежелание немецких властей «умалить» значение Холокоста приводит к тому, что само слово «Геноцид» до сих пор не используется в официальных документах, отражающих позицию Германии по событиям в Османской империи. Определенное смягчение немецкой позиции намечилось лишь в 2005г., когда Бундестаг принял резолюцию, в которой осуждал «массовые убийства» армян в Турции. Однако до окончательного урегулирования этого вопроса еще далеко.

Тем не менее, перспектива вступления Турции в Евросоюз и, следовательно, ее готовность идти на уступки в этом вопросе оставляет властям Германии значительную свободу маневра, и при умелых действиях армянской общины вполне возможна ситуация, при которой позиция Германии окончательно удовлетворит армянскую сторону, а влияние армянской общины, по крайней мере по некоторым важным для нее вопросам, сравняется с влиянием многомиллионного турецкого населения Германии.